ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 06-098-0109-0187 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,99901 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ և 16-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի 987-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19052025-06-0078 վկայականը, Սպիտակ համայնքի ավագանին որոշում է..

1. Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրում գտնվող, Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող 06-098-0109-0187 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,99901 հեկտար մակերեսով արոտավայր հողատեսքի հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել ջրային հողերի նպատակային նշանակության, ջրային գործառնական նշանակության: